ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-3-12-Ա

ք. Երևան 22.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի փետրվարի 27-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Hipp & Co (Brünigstrasse 141 CH-6072 Sachseln, CH) ընկերության բողոքը (IR1127010) «ECO-COMFORT PACK» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն, բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որը առևտրում ծառայում է ապրանքի տեսակը նշելու համար և իրենից ներկայացնում է նկարագրական և գովաբանական բնույթի նիշ: Տվյալ դեպքում «Eco-Comfort Pack» արտահայտությունն ուղղակիորեն նշում է, որ խնդրարկված ապրանքները փաթեթավորվում են էկոլոգիապես մաքուր տուփերով: «ECO»-ն դա «ecology» բառի կրճատ ձևն է, որը թարգմանաբար նշանակում է «էկոլոգիական», ցույց է տալիս ապրանքի ինչպիսին լինելը, որակը, «Comfort»-ը՝ «հարմարավետություն», իսկ «Pack»-ը թարգմանաբար նշանակում է «տուփ», որն էլ հանդիսանում է ապրանքի տեսակ: Ուստի հայտարկված ապրանքային նշանը զուրկ լինելով տարբերակիչ հատկությունից և բացառապես բաղկացած լինելով նկարագրական բնույթի գրառումից, ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի դրույթները բողոքարկման

խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Eco-Comfort Pack» արտահայտությունն ուղղակիորեն նշում է, որ խնդրարկված ապրանքները փաթեթավորվում են էկոլոգիապես մաքուր տուփերով: «ECO»-ն դա «ecology» բառի կրճատ ձևն է, որը թարգմանաբար նշանակում է «էկոլոգիական», ցույց է տալիս ապրանքի ինչպիսին լինելը, որակը, «Comfort»-ը՝ «հարմարավետություն», իսկ «Pack»-ը թարգմանաբար նշանակում է «տուփ», որն էլ հանդիսանում է ապրանքի տեսակ: Ուստի հայտարկված ապրանքային նշանը զուրկ լինելով տարբերակիչ հատկությունից և բացառապես բաղկացած լինելով նկարագրական բնույթի գրառումից, ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր իր տեսակետը:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «ECO-COMFORT PACK» (IR1127010) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ